գակն, և հիմնադրողն կրօնին մերոյ, վախճանմամբ մեր Գերյարգելի Աբբահօրն. ցաւ է ինձ և տրտմութիւն անպակաս, զի զրկեցաք յայսպիսւոյ բարեխնամ և բարերար Հօրէ և Առաջնորդէ, որ էր փառք և պարծանք և հաստատութիւն ազգին և կրօնին մերոյ...։ Արդ ի լսելն զայս ցաւալի լուրս ամենեքեան տրտմեցան և ափսոսալով բարեպաշտական գթով շարժեցան ի յողբ և ի գութ, և ի պաղատանս Աստուծոյ։ Բէպանուշն տեղւոյս, այսինքն Մինաս Վարդապետն յաւուր[ս] հինգ հոչակեաց զձայնաւոր պատարագ վասն մեռելի մեծաւ հանդիսութեամբ. նաև զկնի պատարագին յաւուրս հինգ յայգող և հանդիսական թաղումն արար...։ Նաև սէնադոն և Դատաւորն քաղաքիս ետ մատուցանել քահանայիցն, թէ Հայոց և թէ մահարաց զբազում պատարագս...։ Երկոքեանքս ևս զհինգ հինգ պատարագսն զոր հրամայեալ էր մատուցանել վասն հոգւոյ Աբբահօրն մատուցաք։ Վասն սաստիկ ցաւոյս և տրտմութեանս անկեալ դնիմ ի մահճի. մանաւանդ տկարութիւն ստամոքսիս վասն զի ամենևին ոչ ընդունի և ոչ մարսէ զկերակուրն. զոհութիւն և փառք բարերար կամացն Աստուծոյ որ տանջէ զիս զանազան ցաւով և հիւանդութեամբ...։ Վասն կտակի տանն աղաչայ Պետրոսին գրեալ եմ լիապէս թէ որպէս հաստատեալ եմ աստ, և եղեալ զբարձրագոյն խաչ մի առաջի դրանն, վասն նշանի և հաստատութեան։...

Յամի Տեառն 1749
յուլիսի 2
[Հայաքաղաք]

Վերապատութեանդ ծնամ յամենայնի պատրաստական
Նուաստագունեղ ծառայ
Հայր Ղազարոս կրօնաւոր
ի կարգէ սրբոյն [Անտոնի] Աբբայի

ՃԽԶ.

Հայաքաղաքին հայազգի դատաւորն է, որ կէս աշխարհիկ բարբառով կը բերէ պաշտօնական ցաւակցութիւնը քաղաքին կողմանէ՝ Մխիթարայ մահուան առթիւ, յայտնելով միանգամայն անկեղծ ու ջերմ համակրութիւն և յարգանք Եր. Հօրս յիշատակին և անոր Ուխտին հանդէպ։

Օրհ. եղիցի. Յիսուս Քրիստոս

Գերյարգելոյ և. Վերապատուելոյ
Տեառն Տեառն Հայր Եղիա Վարդապետի
և. Փոխանորդի Աբբայի մեծաւ Յարգութեամբ ողջոյն

Զցաւալի և զբօդալի խապարն լսելով ի կողմանէ Մահուանն մեր հոգևոր սուրբ Հօրն Գերյարգեցելոյ աբբահօրն, խիստ ցաւեցանք և տրտմվէցանք, որ զրկվիլինք այսպիսի սուրբ և պատուական Հօրէ և առաջնորդէ, որ էր փառք և պարծանք արընատ ազգիս Հայոց. և մեր Քաղքին կողմանէն վերապատուելի Քահանայքն, ի միասին ընդ ժողովրդեան աղօթք և պատարագ մատուցիլին վասն հոգւոյ լուսաւորեալ հոգի Աբբահօրն, զի պարգևեսցէ Տէր Նմայ զփառս յաւիտենական, և վիճակակցիլ հաճեսցի ընդ ընտրելեաց սիրելեաց իւրոց, զի բարեխօսեսցէ առ Տէր վասն հասարակ ազգիս Հայոց։ Եւ ևս խնդրինք Աստուծոյ որ այսուհետև միջնորդութեամբ տիրամօր սուրբ Աստուածածնայ, տացէ և պարգևեսցէ ընտրել սուրբ և բարի Աբբահայր, զի կարասցէ սրբութեամբ և իմաստութեամբն իւրով հովուել և կառավարել զայտ սուրբ Կրօնը, զի մեր նաձիային լիցի փառք և պարծանք։ Վասն որոյ մեծավ ըղձմամբ կու խնդրենք զՎերապատուելութիւնդ և զամենայն միաբանքն, որ սիրով ընդունիք այս մեր քաղաքէն ալ այս առաջին պտուղը...։ Նաևս չնորհակալ կուգա արընատ քաղաքը վերապատուելութեան ձերում ի կողմանէ Հայր Ղազարոսին, որ այս տեղը մեր քաղաքը գալով և այց